

Կ Ա Ր Ծ Ի Ք

Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգը (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» ժգ.00.02 - «դասավանդման եվ ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտացմամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայտնի է, որ բանավոր թարգմանիչների պատրաստման հիմնախնդիրը բոլոր ժամանակներում և այսօր էլ շարունակում է արդիական մնալ, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է բազմալեզու թարգմանիչներ պատրաստելու հարցին: Հարցն առանձնակի կարևորություն է ձեռք բերում ներկայի զլոբալացման միտումների պայմաններում, երբ օրեցօր առավել պահանջված ու ակտիվ են դառնում տարբեր երկրների համագործակցային կապերը ժամանակակից կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ տնտեսական ու քաղաքական համագործակցություն, մշակութային ու գիտակրթական փոխգործակցություն և այլն:

Հետևաբար, այս ատենախոսությունը, որը, լայն իմաստով, նվիրված է բանավոր խոսքի ուսուցման մեթոդաբանական համակարգի մշակման ու իրացման խնդիրների քննությանը եռալեզու ուսանող թարգմանիչների պրոֆեսիոնալ կոմպետենտությունը խթանելու նպատակով, անտարակոյս արդիական է և պահանջված:

Ատենախոսը փորձում է ստեղծել բանավոր թարգմանության ուսուցման կոմպետենտահեն լեզվամեթոդական համակարգ, մասնավորապես՝ կարևորելով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների տիրապետման խնդիրը:

Հետազոտության նպատակը հստակ է. մշակել և ուսուցման գործընթացում կիրառել բանավոր թարգմանության ուսուցման այնպիսի լեզվամեթոդական համակարգ, որը լավագույնս նպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Պետք է ասել, որ ատենախոսին հաջողվում է հասնել իր առջև դրված նպատակին, քանի որ նրա մշակած լեզվամեթոդական համակարգն, իրոք, համոզիչ է

և, բակալավրիատի «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակում ներդրվելով, կարող է բարձր արդյունավետություն ապահովել սովորող եռալեզու ուսանողների ուսուցման դաշտում:

Առանձնակի դրվատանքի է արժանի այն հանգամանքը, որ, ուսումնասիրելով բանավոր հաջորդական թարգմանության առանձնահատկությունները, ատենախոսը կարողացել է ստեղծել բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության կադապար, որի հիմքի վրա էլ նրան հաջողվել է մշակել բանավոր թարգմանության ուսուցման իր առաջադրած լեզվամեթոդական համակարգը:

Ինչ վերաբերում է այս հետազոտության գիտական նորույթին, ապա այստեղ էլ կարելի վստահաբար պնդել, որ կասկածներ չեն ծագում, քանի որ ատենախոսության մեջ մի կողմից որոշարկվում են եռալեզու բանավոր ուսանող թարգմանիչների պրոֆեսիոնալ պատրաստությանն ուղղված բովանդակային խնդիրները, ապա մշակվում է նրանց պրոֆեսիոնալ կոմպետենտության կառուցվածքն իր պարտադիր բաղադրիչներով: Ընդ որում չի անտեսվում նաև անգլերենի, ռուսերենի և հայերենի հնարավոր փոխազդեցությունների խնդիրը և լուսաբանվում են բացասական փոխազդեցությունների կանխարգելմանն ուղղված միջոցների կիրառման հարցերը: Եվ վերջապես, ատենախոսության կանոնագույն արժանիքներից է ատենախոսի կողմից մշակված ու փորձարկված լեզվամեթոդական համակարգը, որը չափազանց կարևոր է բանավոր թարգմանության ուսուցման դաշտում կոմպետենտ ու հմուտ եռալեզու թարգմանիչներ պատրաստելու համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և, որ շատ տեղին ու օգտակար եմ համարում, վեց հավելվածից, որոնցում ներկայացված նյութը շատ արժեքավոր է՝ ուղղված ապագա բանավոր-թարգմանիչների գործնական թարգմանական հմտությունները զագացնելուն: Հավելվածու կարևոր և օգտակար եմ համարում նաև մշակված լեզվամեթոդական համակարգի փորձարկման ընթացքի լուսաբանման ատենախոսի որոշումը: Բուն աշխատանքը՝ առանց հավելվածների կազմում է 138 էջ:

«Բակալավրիատի ուսանողներին եռալեզու բանավոր թարգմանչական

գործունեության ուսուցման տեսական հիմունքները «Թարգմանական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ծրագրի շրջանակներում» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում «Բանավոր թարգմանիչների պատրաստման ժամանակակից պահանջները բազմալեզվության համատեքստում» վերնագրի ներքո վերլուծվում են Ռուսաստանի և Եվրոպայի առաջատար մասնագիտացված ուսումնական հաստատությունների «Թարգմանչական գործ» մասնագիտության բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերը: Հիմնավորվում է բազմալեզու թարգմանիչների մասնագիտական պատրաստման ոլորտում առաջնային նշանակություն ունեն լեզվական, թարգմանչական, հանրալեզվաբանական, գործաբանական, խոսութային կոմպետենտության զարգացման ռազմավարական ծրագրերի կարևորությունը:

Երկրորդ՝ «Բանավոր հաջորդական թարգմանությունը՝ որպես թարգմանչի մասնագիտական գործունեության տեսակներից մեկը» ենթագլխում ներկայացված են բանավոր թարգմանության և հաջորդական բանավոր թարգմանության տեսակները, մասնավորապես՝ հաջորդական բանավոր թարգմանության բնութագրերն ու ընթացքը, ինչպես նաև հաջորդական բանավոր թարգմանության ընթացքում թարգմանչից պահանջվող գործողությունները:

Երրորդ ենթագլուխը՝ վերնագրված «Բակալավրիատի եռալեզու ուսանողների մասնագիտական պատրաստման առանձնահատկությունները «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն)» ծրագրի շրջանակներում» ներկայացնում է Հայաստանում բազմալեզու թարգմանիչների պատրաստման ընդհանուր իրավիճակը, վերլուծվում են «Թարգմանչաց գործ» մասնագիտության բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագիրը և լեզվաբանության բակալավրի որակավորման «Թարգմանչական գործ» (ռուսերեն, անգլերեն, հայերեն) ուսումնական պլանը, ինչպես նաև՝ ռուսերենի և անգլերենի մասնագիտական որակավորման վրա ազդող գործոնները, եռալեզվության ազդեցությունն ուսանողների լեզվական մակարդակի և անհատականության ձևավորման վրա և մի շարք այլ հարակից հարցեր:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Կոմպետենտային մոտեցման հիման վրա բանավոր թարգմանության ուսուցման մեթոդաբանական

հիմքերը» և բաղկացած է երեք ենթագլխից, աշխատանքի թերևս ամենահետաքրքիր ու կարևոր գլուխներից մեկն է: Այստեղ՝ առաջին ենթագլխում քննության է առնվում կոմպետենտային ուսուցման խնդիրը՝ որպես հուսալի մեթոդաբանական հիմք բանավոր թարգմանության արդյունավետ դասավանդում կազմակերպելու գործընթացում: Հանգամանորեն ներկայացվում են ուսանող թարգմանիչների մասնագիտական պատրաստման կոմպետենցիաների վրա հիմնված մոտեցման պահանջները: Բացահայտվում են կոմպետենցիաներերի վրա հիմնված մոտեցման տեսանկյունից բակլավրիատում «Թարգմանչական գործ (ռուերեն, անգլերեն, հայերեն)» մասնագիտությամբ սովորող ուսանողներին բանավոր թարգմանություն ուսուցանելու նպատակները:

Երկրորդ՝ «Եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մոդելը և նրա ձևավորման մեթոդիկան» ենթագլխում մեկնաբանվում են «կոմպետենտություն» և «կոմպետենցիա» տերմինները, առաջարկվում է եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մոդելը, ներկայացվում է սովորողների մասնագիտական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված վարժությունների համակարգ: Մասնագիտացված գրականության ուսումնասիրության արդյունքում ատենախոսը վեր է հանում և շեշտադրում եռալեզու թարգմանչի մասնագիտական կարողությունների մոդելի պարտադիր բաղադրիչները՝ լեզվական ու թարգմանական, մշակութային ու միջմշակութային, խոսութային հետազոտական, մեթոդական, թեմատիկ և տեխնոլոգիական կոմպետենցիաները, որոնց դերը էական է հաջողված բանավոր թարգմանություն իրականացնելու գործընթացում:

Աշխատանքի երրորդ գլուխը չափազանց հետաքրքրական է և հատկապես կիրառական առումով՝ արժեքավոր, քանի որ այստեղ թիրախային կրթական ծրագրի շրջանակներում ատենախոսի առաջարկած լեզվամեթոդաբանական համակարգի հուսալիությունն ու արդյունավետությունը ստուգվում են փորձառական մեթոդի գործարկմամբ: Այս գլխի երեք ենթագլուխներում հանգամանորեն քննության են առնվում բակլավրիատի եռալեզու ուսանողներին բանավոր հաջորդական թարգմանություն ուսուցանելու առանձնահատկությունները, լեզվամեթոդական համակարգի կառուցվածքը, հիմնավորվում է սովորողների լեզվական

կարողությունների կատարելագործման կարևորությունը, ուշադրություն է հրավիրվում թարգմանության գործընթացում քերականական, բառապաշարային և հնչյունական հնարավոր դժվարությունների վրա և ներկայացվում են մանկավարժական գիտափորձի հաստատող փուլի ընթացքն ու արդյունքները: Իրականացված մանկավարժական գիտափորձի երեք փուլերը՝ հաստատող, ստուգողական և վերահսկման, ուղեկցվում են թարգմանիչների պատրաստման գործընթացի վերլուծությամբ, որն էլ օգնում է բացահայտել բանավոր թարգմանչական գործունեության յուրահատկությունները:

Ի մի բերելով աշխատանքից ստացած մեր տպավորությունները՝ նշենք, որ Նարինե Բուկուշյանի այս ատենախոսական ուսումնասիրությունը չափազանց հետաքրքիր, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է՝ իրականացված գիտական բարձր մակարդակով: Հեղինակի գիտական ու մեթոդական հասունությունն ակնհայտ է աշխատանքում: Ատենախոսությունը շարադրված է գրագետ գիտական ռուսերենով: Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այուամենայնիվ կուզենայի առանձնացնել որոշ նկատառումներ, որոնց հաշվառումը կարող է օգտակար լինել թեմայի հետագա զարգացման առումով:

1. Խոսելով եռալեզու թարգմանիչների մասին՝ ատենախոսը որևէ անդրադարձ չի անում այն հարցին, թե ստորադասության, համադասության ինչ մակարդակ է հաղթահարում թարգմանիչը թարգմանական գործընթացում:

2. Ենթադրում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե հետազոտության հիմնախնդրի լուսաբանման համատեքստում ատենախոսը հաշվի առներ նաև դիտարկվող երեք լեզուների տիպաբանական առանձնահատկությունները:

3. Վատ չէր լինի բացահայտել նաև բանավոր թարգմանության գործընթացում լեզուների փոխներթափանցումը հաղթահարելուն ուղղված համապատասխան մեթոդիկայի առանձնահատկությունները:

4. Աշխատանքը գերծ չէ նաև որոշ վրիպակներից, որոնցից պետք էր հնարավորինս խուսափել:

Այս դիտարկումներն, իհարկե, չեն կարող որոշիչ ազդեցություն գործել ատենախոսության արժևորման վրա, քանի որ պաշտպանության ներկայացված այս աշխատանքը հետաքրքիր է, իսկ առաջարկվող լուծումներն, անշուշտ, իրենց

նպաստը կբերեն բանավոր թարգմանության ուսուցման արդյունավետությունը խթանելու գործին:

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգը (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» ատենախոսությունը ամբողջական, գիտական ու լեզվական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է: Այն լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով / գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջները, որն էլ հիմք է տալիս միջնորդելու ՀՊՄՀ-ում գործող ԲԿԳԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Բան., գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ս.Ք.Գասպարյան

Ս.Ք.Գասպարյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ գիտ. քարտուղար



Ս. Հովհաննիսյան